«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Անձի զարգացում, սոցիալականացում, «անհատ», «անձ», անհատականություն», տարիքային շրջափուլեր:
ԱՌԱՐԿԱ	Մաթեմատիկա
	էլմիրա Եղիազարյան
ՄԱՐԶ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Գ. Գյուլբենկյանի անվան թիվ 190 ավագ դպրոց

Բովանդակություն

Ներածություն_____3

Գլուխ 1. Անձի զարգացում, սոցիալականացում, «անհատ», «անձ», «անհատականություն» _____ 4

1.1. Մարդը՝ որպես կենսաբանական էակ _____ 4

1.2. Անձի զարգացում _____ 6

1.3. Դաստիարակության դերը անձի ձևավորման և Զարգացման գործում _____ 12

Գլուխ 2. Դպրոցականի անձի զարգացման եվ ձևավորման տարիքային փուլերը _____ 15

2.1.Դպրոցականի անձի զարգացումը _____ 15

2.2. Տարբեր տարիքի դպրոցականների զարգացման և դաստիարակության առանձնահատկությունները_____ 17

Եզրակացություն_____ 19

Օգտագործված գրականություն _____20

Ներածություն

Մարդն աշխարհ է գալիս որպես կենսաբանական էակ, անհատ: Մարդաբանության մարդասիրական հարացույցն առաջարկում է ուսումնասիրել մարդուն ամբողջական, իհարկե՝, չբացառելով նրա առանձնահատկությունները և տարանջատելով «մարդ», «անձ», «անհատ», «անձնավորություն», «անհատականություն» հասկացությունները:

«Մարդ» հասկացությունը միավորում է տվյալ տեսակին հատուկ բնական և սոցիալական հատկանիշները: Մարդը հասարակական էակ է, օժտված է գիտակցությամբ, իր մեջ մարմնավորում է կյանքի զարգացման բարձրագույն մակարդակը և համարվում է պատմահասարակական գործունեության սուբյեկտ: Մարդու մեջ կա երեք կողմ. կենսաբանական՝ անհատ, սոցիալական՝ անձ, և «մարդկայինը մարդու մեջ»՝ անհատականություն:

«Անհատականություն» հասկացությունը ներառում է այն ընդհանուրը և եզակին, ինչով մի մարդը տարբերվում է մյուսից, որն էլ նրանց հաղորդում է յուրահատուկ անկրկնելիություն: Անհատականությունը բնութագրվում է տարբերիչ, միայն իրեն հատուկ հատկանիշների համալիրով: Այն անհատը, ում մեջ զարգացած է անհատականությունը, ինքնուրույն, կատարելության հասած մարդն է, ով ակտիվորեն ճանաչում և վերափոխում է իրականությունը, իր ուրույն ներդրումն ունի հասարակության զարգացման առաջընթացին, հաջողությամբ դրսևորվում է գործունեության տարբեր ոլորտներում:

Դպրոցը պետք է նախապատրաստի իր սաներին իրական կյանքի դժվարություններին: Դպրոցի, մասնավորապես ուսուցչի խնդիրն է օգտագործել պատանեկան հասակին ներհատուկ ճկունությունն ու կենսունակությունը՝ դժվարությունների հաղթահարմանը նախապատրաստելու համար: Այս կենսափուլում դաստիարակության առաջնահերթ նպատակն է մասնագիտական ճիշտ կողմնորոշումը, ճանաչողական ակտիվության խթանումը, ընդունակությունների և կարողությունների դրսևորման համար համապատասխան միջավայրի ստեղծումը:

Անձի զարգացման առաջին գործոնը հասարակական մեծ ակտիվությունն է: Մեր նպատակն է վարքի որոշակի նորմերի և արժեքների յուրացումը, չափահասների ու ընկերների հետ հարաբերությունների հաստատումը: Դեռահասը ծրագրում է իր ապագան, փորձում է իրականացնել իր մտադրությունները, նպատակներն ու խնդիրները:

1. Անձի զարգացում, սոցիալականացում, «անհատ», «անձ», «անհատականություն»

1.1. Մարդը՝ որպես կենսաբանական էակ

Մարդն աշխարհ է գալիս որպես կենսաբանական էակ, անհատ: Մարդաբանության մարդասիրական հարացույցն առաջարկում է ուսումնասիրել մարդուն ամբողջական, իհարկե՛, չբացառելով նրա առանձնահատկությունները և տարանջատելով «մարդ», «անձ», «անհատ», «անձնավորություն», «անհատականություն» հասկացությունները:

«Մարդ» հասկացությունը միավորում է տվյալ տեսակին հատուկ բնական և սոցիալական հատկանիշները: Մարդը հասարակական էակ է, օժտված է գիտակցությամբ, իր մեջ մարմնավորում է կյանքի զարգացման բարձրագույն մակարդակը և համարվում է պատմահասարակական գործունեության սուբյեկտ: Մարդու մեջ կա երեք կողմ. կենսաբանական՝ անհատ, սոցիալական՝ անձ, և «մարդկայինը մարդու մեջ»՝ անհատականություն:

«Անհատը» պատկանելությունն է Homo Sapiens (բանական մարդ) տեսակին. դա եզակի, առանձին անհատն է, ֆիլոգենետիկ և օնտոգենետիկ զարգացման արդյունքը, բնածին և ձեռքբերովի հատկանիշների միասնությունը, անհատական-յուրահատուկ գծերի կրողը: Անհատը մարդկային ցեղի եզակի ներկայացուցիչն է՝ իր կենսաբանական անկրկնելի հատկանիշներով: «Անհատականություն» հասկացությունը ներառում է այն ընդհանուրը և եզակին, ինչով մի մարդը տարբերվում է մյուսից, որն էլ նրանց հաղորդում է յուրահատուկ անկրկնելիություն: Անհատականությունը բնութագրվում է տարբերիչ, միայն իրեն հատուկ հատկանիշների համալիրով: Այն անհատը, ում մեջ զարգացած է անհատականությունը, ինքնուրույն, կատարելության հասած մարդն է, ով ակտիվորեն ճանաչում և վերափոխում է իրականությունը, իր ուրույն ներդրումն ունի հասարակության զարգացման առաջընթացին, հաջողությամբ դրսևորվում է գործունեության տարբեր ոլորտներում:

«Անձը» մարդու մեջ սոցիալական սկիզբն է, նրա պատկանելությունը սոցիալական աշխարհին: Անձը սոցիալական հարաբերությունների կրողն է. նրա էությունը որոշվում է նրանով, թե որքանով է անհատական գործունեությունն ընդգրկված սոցիալական հարաբերություններում: Անձը բարեկամական, ընկերական, տնտեսական, արտադրական, քաղաքական և այլ հարաբերությունների համակարգ է: Հ. Մախչանյանը գրում է, որ անձը

սոցիալականացված անհատն է իր կազմաբնախոսական, հոգևոր-բարոյական և գիտակցական բոլոր հատկանիշներով, իր վարքագծով և գործունեությամբ, մարդկանց հետ ունեցած բազմաբնույթ հարաբերություններով, սոցիալական դերերով և քաղաքացու որակներով: Անհատն անձ է դառնում՝ ապրելով հասարակության մեջ, անցնելով անհատական կյանքի և սոցիալականացման բարդ ու երկարատև ճանապարհ, ենթարկվելով տարիքային և անհատական-հոգեբանական փոփոխությունների: Մարդն անձ է դառնում մարդկային հասարակության մեջ ընդունված սոցիալական կյանքի և հարաբերությունների պայմաններում: Որպեսզի անհատն անձ դառնա, պետք է ունենա ֆիզիկական, բնախոսական, սոցիալական, մտավոր, բարոյական, գեղագիտական զարգացման որոշակի աստիճան: «Անձնավորություն» հասկացությունն արտահայտում է ընդհանուրը, բացահայտում է յուրաքանչյուր անձին բնորոշ հատկանիշների ամբողջությունը: Յուրաքանչյուր կոնկրետ անձնավորություն մյուսներից տարբերվում է բազմաթիվ հատկանիշներով ու որակներով, իր գիտակցության և ինքնագիտակցության շնորհիվ հարաբերությունների մեջ է մտնում իր նման մարդկանց հետ, հասարակության մեջ որոշակի դերեր և դիրք գրավում, կարող է ընտրություն կատարել, ունի կամք, զգացմունքներ, նպատակասլացություն:

Զարգացումը փոփոխություն է, որն իրենից ներկայացնում է որակի անցում պարզից ավելի բարդին, ստորինից՝ բարձրին, որի առկայությամբ քանակական փոփոխությունների կուտակումը հանգեցնում է որակականի փոփոխման: Հանդիսանալով նորացման, նորի ծննդի և հնի մահացման գործընթաց՝ զարգացումը հակադիր է անկմանը, քայքայմանը: Զարգացման աղբյուրն ու ներքին բովանդակությունը հնի ու նորի հակասությունների առկայությունն է: Մարդու ֆիզիկական ու հոգեկան զարգացումը ենթարկվում է ընդհանուր օրինաչափություններին: Քանի որ այն, ինչպես որ բնության բոլոր երևույթները, ունի իր անցյալն ու ապագան, ինչոր դարն ապրած ու ինչոր ծնունդ առնող բան, նրան հատուկ են ներքին հակասությունները (օրինակ, հակասությունը օրգանիզմին, անհատականությանը կամ անձին ներկայացվող պահանջների և այն բանի միջև հակասությունը, ինչն արդեն ունի մարդը և ինչպես կարող է պատասխանել այդ պահանջներին):

Օրգանիզմի աճը (քանակական փոփոխություններ) կապված է նրա կառուցվածքի ու գործառույթների հետ (որակական փոփոխություններ): Օրգանիզմում քանակական ու որակական փոփոխությունների կուտակումը հանգեցնում է անցման տարիքային զարգացման մի աստիճանից այլ, ավելի

բարձր աստիճանի: Ընդ որում յուրաքանչյուր աստիճանը որակապես տարբեր է մնացած բոլորից:

Մանկավարժի խնդիրն է նպաստել երեխայի օրգանիզմի (ֆիզիկական զարգացում), անհատականության (հոգեկան զարգացում) և անձի (անձի դաստիարակություն) զարգացմանը: Այդ հատկանիշների ձևավորումն սկսվում է կյանքի առաջին քայլից և դաստիարակի (ծնողի, ուսուցչի) վստահությունից, իսկ ապա նաև երեխայից, որ ամեն ինչի կարելի է հասնել, եթե դրսևորի բավականաչափ հաստատակամություն և համառություն: Դիմենք Կոնֆուցիոսի աֆորիզմին. «Եթե ես ամեն օր մի զամբյուղ հող բերեմ և չհեռանամ դրանի, ապա լեռ կկանգնեցնեմ»:

1.2. Անձի զարգացում

Երբ խոսում են զարգացման մասին, ենթադրում են կենսաբանական (օրգանիզմ), հոգեկան (անհատականություն) և սոցիալական (անձ) փոփոխությունը մարդու մեջ: Մանկավարժության մեջ այդ հասկացությանն է պատկանում անհատականության և օրգանիզմի զարգացումը: Սոցիալական հատկանիշների (անձնական հատկանիշների) զարգացումը այլ մարդկանց ներգործությամբ կոչվում է դաստիարակություն:

Մանկավարժության և հոգեբանության մեջ մշտապես բախվել են երկու մոտեցում անձի զարգացման էության ըմբռնման վերաբերյալ՝ կենսաբանականն ու սոցիոլոգիականը. առաջինն այդ գործընթացը պայմանավորում է զուտ բնական գործոններով և ամենից առաջ նրանցով, որոնք մարդուն հատուկ են ծնված օրից, երկրորդը ենթադրում է, որ մարդու վրա գերակշռող ազդեցություն գործում են սոցիալական գործոնները: Նպատակահարմար է անձը դիտել որպես ամբողջական համակարգ, որի մեջ արտացոլվում է ինչպես կենսաբանականը, այնպես էլ սոցիալականը: Աճող օրգանիզմը ձգտում է որոշակի տվյալներով որոշված սահմաններում սեփական «Ես»-ի իրականացման: Անձի զարգացումն իրենից ներկայացնում է միասնական գործընթաց, որի մեջ կատարվում են ինչպես քանակական, այնպես էլ որակական վերափոխումներ: Դա ենթադրում է զանազան կարգի այնպիսի հակասությունների լուծում, որոնք համարվում են անձի զարգացման աղբյուրներ.

- երեխաների պահանջմունքների և դրանց բավարարման հնարավորություն ների հակասությունը,
- երեխայի հնարավորությունների և հասարակության պահանջների հակասությունը,
- երեխայի առաջադրած նպատակների և դրանց նվաճման պայմանների հակասությունը:

Այդ հակասությունները դրսևորվում են տարբեր կերպ մարդու զարգացման տարբեր տարիքային փուլերում:

Լ.Ս. Վիգոտսկին առանձնացրել է երեխաների զարգացման երկու մակարդակ՝

- «հրատապ զարգացման մակարդակ»-արտացոլում է երեխայի հոգեբանական գործառույթների առկա առանձնահատկությունները, որոնք ձևավորվել են այսօրվա դրությամբ,
- «մերձավոր զարգացման գոտի» - արտացոլում է երեխայի նվաճումների հնարավորությունները մեծահասակների համագործակցության պայմաններում:

Մանկավարժները պետք է տեսնեն երեխայի զարգացման վաղվա օրը. այն, ինչ որ այսօր նա կարող է անել մեծահասակների օգնությամբ, վաղը պետք է անձամբ անի: Երեխայի զարգացումը տեղի չի ունենում միայնության մեջ: Այդ գործընթացի վրա ազդում են շրջակա միջավայրը, և, ամենից առաջ, սոցիալական հարաբերությունների համակարգը, որին մանկուց ներգրավվում է երեխան:

Անձի զարգացումը արտաքին ու ներքին, կառավարվող ու չկառավարվող գործոնների ազդեցության արդյունք է: Դա մարդուն ներհատուկ բնածին նախադրյալների իրացումն ու կատարելագործումն է, քանակական ու որակական փոփոխությունների միագումարը, որի արդյունքում մարդը սոցիալական միջավայրում կենսաբանական էակից աստիճանաբար փոխակերպվում է հասարակական էակի, սոցիալականացվում է: Անձի զարգացումն առաջին հերթին ենթադրում է ֆիզիկական աճ և հասունացում, օրգանիզմի աստիճանաբար զարգացում: Առավել բարդ գործընթաց է անձի բնախոսական և հոգեկան գործընթացների զարգացումն ու կատարելագործումը, աշխարհայացքի և հոգևոր որակների ձևավորումը: Անձի ձևավորումը նրա զարգացման գործընթացի հարաբերական ավարտուն աստիճանի արտահայտությունն է, որում մեծ դեր ունեն տվյալ հասարակական կարգը՝ իր քաղաքական, իրավական, կրոնական, բարոյահոգեբանական և այլ արժեհամակարգերով, որոնք էլ աստիճնաբար կերտում են անձի

քաղաքացիական, կրոնաբարոյական, էթնոհոգեբանական և առհասարակ մարդկային նկարագիրը:

Անձի զարգացման և ձևավորման գործում գլխավոր դեր են խաղում՝

- բնական, ժառանգականության գործոնը,
- միջավայրը կամ սոցիալական գործոնը,
- դաստիարակությունը:

Ժառանգականություն ասելով հասկանում ենք ծնողներից երեխաներին փոխանցված այն առանձնահատկությունները, որոնք ներդրված են նրա գենետիկական ծրագրում: Գենետիկ ծրագիրը ծածկագրված է ԴՆԹ-ի մոլեկուլյար կառուցվածքում, որն ապահովում է օրգանիզմի բոլոր համակարգերի աշխատանքը: Կա նաև ցեղային, տոհմային, ազգային կամ էթնիկ ժառանգականություն, որը բնորոշ նույն ազգին պատկանող անհատին: Ժառանգական այդ գծերը ամենից առաջ ապահովում են մարդկային ցեղի շարունակումը: Ժառանգական տվյալները ներդրված են ուղեղի կառուցվածքում, զգայարաններում, խոսքաշարժողական օրգաններում: Ժառանգաբար փոխանցվում են՝

- մորֆոլոգիական [անատոմիաֆիզիոլոգիական] գծերը, ֆիզիկական հատկանիշները՝ մաշկի, աչքերի, մազերի գույնը, մարմնի ձևը, հասակը, նյարդային համակարգը, զգայարանները և այլն,
- արյան խումբը, ռեզուս գործոնը,
- մի շարք հիվանդություններ՝ շաքարախտ, հոգեկան հիվանդություններ, դալտոնիզմ, խլություն, կարճատեսություն և այլն,
- ռասայական հատկանիշներ, օր՝ նեգրոիդից ծնվում է նեգր և այլն,
- մարդու՝ որպես բանական էակին բնորոշ տեսակային նախադրյալները՝ հոդաբաշխ խոսքը, ուղղահայաց կեցվածքը, մտածողությունը, աշխատանքի ընդունակության տվյալները և այլն:

Ժառանգաբար փոխանցվում են նաև արվեստի, գիտության որևէ բնագավառի կամ գործունեության ոլորտի ուղղությամբ ընդունակությունները. մաթեմատիկայի, արվեստի որևէ տեսակի վերաբերյալ ժառանգական տվյալները և ընդունակությունները կարող են փոխանցվել մի քանի սերունդ: Հայտնի է, որ Հովնաթանյանների ընտանիքը տվել է մի քանի սերնդի նկարիչներ: Յոհան Ս. Բախի ընտանիքում եղել է 57 երաժիշտ, Վ. Ա. Մոցարտի գերդաստանում՝ 56: Այստեղ հիմնական պատճառը ոչ միայն կենսաբանական ժառանգականությունն է, այլև այն, որ այդ ընտանիքներում սերունդները դաստիարակվել են որոշակի հետաքրքրությունների

մթնոլորտում՝ երգ, պար, երաժշտություն՝ վաղ մանկությունից ներգրավվելով այդ մթնոլորտիում: Բացի հատկությունների ժառանգական հիմքից կարևոր են նաև կյանքի պայմանները:

Մարդը՝ որպես կենսաբանական էակ, իր զարգացման ընթացքում ենթարկվում է աննշան փոփոխությունների: Մարդու տեսակի փոփոխություն կարող է տեղի ունենալ միայն մարդու գենետիկական կոդի նկատմամբ ակտիվ միջամտության դեպքում: Գիտնականները այդպիսի հնարավորություն չեն բացառում. դա, ինչ խոսք, կունենա գիտական բացառիկ նշանակության, սակայն այն կանխորոշում է քաղաքական, սոցիալական լուրջ վտանգ՝ խախտելով մարդու բնական զարգացման ընթացքը և անկանխատեսելի հետևանքներ հարուցելով: Գենային փոփոխությունների ազդակ կարող են լինել ատոմային ճառագայթումը, ալկոհոլը, թմրանյութերը, ձայնային գերբեռնումը և այլն, որոնք կարող է խախտել ԴՆԹ-ի կառուցվածքը:

Ուսումնասիրությունները վկայում են, որ ժառանգվում են ոչ թե սոսկ ընդունակությունները, այլ դրանց նախադրյալները, իսկ ժառանգված հատկանիշների դրսևորումը և զարգացումը կախ¬ված է կյանքի պայմաններից, անհատի ձգտումներից, հասարակության պահանջմունքից և այլն:

Ժառանգականությունը, իր դերն ունենալով հանդերձ, չի կանխորոշում մարդու ճակատագիրը: Ժառանգաբար չեն փոխանցվում մարդուն բնութագրող այնպիսի հատկանիշներ, ինչպիսին են գիտելիքները, համոզմունքները, աշխարհայացքը, բնավորությունը, բարոյականային որակները:

Անձի զարգացման և ձևավորման մյուս կարևոր գործոնը սոցիալականն է, որը ներառում է՝

- կյանքի պայմանները (մեգա, մակրո, մեզո, միկրո միջավայր),
- մարդու գործունեությունը,
- դաստիարակությունը՝ որպես կազմակերպված երևույթ:

Միջավայր ասելով պիտի հասկանալ մարդուն շրջապատող իրականությունը, տնտեսական, քաղաքական պայմանները: Որոշակի դեր են խաղում նաև աշխարհագրական միջավայրը, ընտանիքը, մերձավորները և այլն:

Մարդու սոցիալական դեմքը առաջին հերթին որոշվում է նրա ազգային պատկանելությամբ. մարդը ծնվում է որպես այս կամ այն պետության քաղաքացի: Հետևաբար մարդու անձի զարգացման և ձևավորման վրա

ազդում է այն երկրի հասարակական-տնտեսական հարաբերությունների համակարգը, որտեղ նա ապրում է: Մարդու անձի զարգացման վրա ներգործող սոցիալական գործոններ են գյուղի և քաղաքի պայմանների տարբերությունը, միգրացիոն և ժողովրդագրական տեղաշարժերը, կյանքի տևողությունը, լրատվամիջոցները:

Մանկավարժական և հոգեբանական հետազոտությունները հաստատում են, որ անձի զարգացումը, հոգեբանական և կազմաբնախոսական բոլոր հատկությունները ձեռք են բերվում նրա աճի և կենսագործունեության ընթացքում, հաղորդակցվելիս: Շվեյցարացի հոգեբան Ժան Պիաժեն երեխայի զարգացումը բնութագրում է որպես ընդհանրական գործընթաց, որը պետք է դիտարկել կենսաբանական և հոգեբանական համատեքստում: Երեխայի զարգացումը նա կապում է ճանաչողության ամբողջ համակարգի հետ: Ծնվելու պահից երեխան ամենօրյա շփման մեջ է մտնում այն իրականության հետ, որում ապրում է: Միջավայրի ազդեցությամբ են ձևավորվում երեխայի հոդաբաշխ խոսքը, մտածողու-թյունը, ուղղահայաց կեցվածքը: Մանկական հասակում կենդանիների միջավայր ընկած մաուգլի երեխաների վարքի ուսումնասիրությունը վկայում է, որ այդ երեխաների մեջ վերը նշված հատկանիշները չեն զարգանում, ընդունակությունների զարգացումը կասեցվում է, թեև նրանք եղել են սովորական երեխաներ՝ օժտված բանական էակին հատուկ ֆիզոլոգիական բոլոր նախադրյալներով:

Սոցիալական են կոչվում այն գործոնները, որոնցում առկա են կամ համապատասխան պայմաններ են ստեղծվում անձի սոցիալականացման համար: Սոցիալականացումն անհատի կողմից ամբողջ կյանքի ընթացքում հասարակության կողմից կուտակած սոցիալական փորձի, վարքի նորմերի, մշակութային արժեքների համակարգի յուրացումն է: Սոցիալականացումը մարդու փոխազդեցությունն է հասարակության հետ, նրա ինտեգրումը հասարակություն, որի ընթացքում տեղի է ունենում նրա հարմարումը՝ սոցիալ-մշակութային, հոգեբանական ադապտացիան: Ըստ էության սոցիալականացումն անձի ինքնիրացումն է, ինքնազարգացումը, որն ընթանում է մի քանի փուլերով.

- Առաջին կամ վաղ փուլն ընդգրկում է երեխայի ծննդից մինչև դպրոց ընդունվելը և ապա հանրակրթության շրջանը:
- Երկրորդ փուլն ընդգրկում է մարդու հասունացումը և աշխատանքային գործունեությունը:

- Երրորդ փուլն սկսվում է անձի աշխատանքային գործունեության դադարեցումից հետո՝ տարեց հասակում:

Մանկավարժ գիտնական Ա. Մուդրիկն առանձնացնում է սոցիալականացման հիմնական գործոնների երեք խումբ.

1. **Մակրո (մեծ, խոշոր) գործոններ**. դրանց շարքին են դասվում տիեզերքը, Երկիր մոլորակը, աշխարհը, հասարակությունը, պետությունը, տվյալ հասարկությանը հատուկ սոցիալ-քաղաքական կարգը, մշակութային, կրոնական, տնտեսական գործառույթները, բնական-հասարակական, էկոլոգիական պայմանները, որոնք ազդում են ժողովրդի կենսակերպի, հոգեկերտվածքի և անհատի գիտակցության վրա:
2. **Մեզո (միջին]) գործոններ.** դրանց մեջ են ընդգրկվում էթնոսը, այն բնակավայրը, որում ապրում են մարդիկ՝ տարածաշրջանը, մարզը, գյուղը, քաղաքը, ԶԼՄ-ները՝ ռադիոն, հեռուստատեսությունը, մամուլը և այլն: Բնականաբար աշխարհագրական դիրքն իր կնիքն է թողնում սոցիալականացման գործընթացում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն ազգերը, որոնք հեռու են գտնվում քաղաքակրթության կենտրոններից և հոգեմտավոր զարգացմանը նպաստող աղբյուրներից [էսկիմոսներ, չուկչիներ, անապատի բնակիչները և այլն], լիարժեքորեն չեն զարգանում:
3. **Միկրո (փոքր) գործոններ**. դրանց շարքին են դասվում մարդկանց վրա անմիջականորեն ներգործող միջոցները, օր.՝ կրթադաստիարակչական հաստատությունները, ընտանիքի անդամները, հասակակիցները, հասարակական և մարզամշակութային հաստատություններն ու կազմակերպությունները, որոնցում իրականացվում է սոցիալական դաստիարակությունը: Այս բոլորի ազդեցությունը մարդը մշտապես կրում է իր վրա. որքան բազմակողմանի է շփումը միջավայրի հետ, այնքան լիարժեք և արագ է ընթանում զարգացումը:

1.3. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մանկավարժական մտքի պատմության մեջ ի սկզբանե առկա էր բիոգենետիկական տեսակետը, ըստ որի՝ անհատի ֆիզիկական և հոգեկան բոլոր հատկանիշներն ու որակները կանխորոշված են ժառանգականությամբ, դրված են սաղմի մեջ և հետո միայն աճում ու զարգանում են (Զ. Ֆրոյդ, Ժ.Պիաժե, Ադլեր):

Դեռևս Հին Հունաստանում այս տեսակետին հակադրվեց այսպես կոչված «մաքուր տախտակի» (tabula rasa) տեսակետը, որը 17-րդ դարում տեսականորեն հիմնավորեց անգլիա¬ցի մանկավարժ Ջոն Լոկկը: Նա ժխտում է ժառանգականությանն դերը՝ բացառելով կենսա¬բանական գործոնների դերն անձի զարգացման գործընթացում: Սոցիոգեն տեսության կողմ¬նակիցները գերագնահատում են միջավայրի դերը(Կ. Հելվեցիուս, Դ. Դիդրո և այլք): 20-րդ դարում գերմանացի հոգեբան Վ. Շտեռնը առաջ քշեց կոնվերգենցիայի՝ 2 գործոնների միախառնման տեսությունը՝ փորձելով հաշտեցնել վերոնշյալ տեսությունները: Ըստ Շտեռնի՝ միջավայրն ու դաստիարակությունն անձի զարգացման կարևոր գործոններ են, առանց որոնց ժառանգական լավագույն տվյալներն անգամ կարող են մնալ որպես ներքին հնարավորություններ և երբեք չարտահայտվել. ոչ մի միջավայր և դաստիարակություն չեն կարող անձի զարգացումը դուրս բերել ժառանգականորեն պայմանավորվող հնարավորությունների սահմաններից:

Այնուհանդերձ այս տեսակետն անտեսում է ինքնադաստիարակության դերը:

Ժամանակակից հայեցակարգերը և տեսությունները անձի լիարժեք զարգացումը պայմանավորում են կազմակերպված և նպատակաուղղված դաստիարակությամբ: Անձի զարգացումը բարդ, տևական, հակասություններով լի գործընթաց է, որի շարժիչ ուժերն են արտաին և ներքին հակասությունները: Ներքին հակասություններն են անձի հնարավորությունների ու պահանջմունքների միջև եղած տարբերությունները: Արտաքին հակասություններն արտահայտվում են անձի հնարավորությունների ու հասարակության պահանջմունքների միջև տարբերությամբ: մարդու Անձի ձևավորման, զարգացման ընդհանուր համատեքստում դաստիարակության դերը նրա սոցիալականացման գործըն¬թացին նպաստելն է սոցիալական այլ գործոնների հետ միասին:

Դաստիարակությունը անձի ձևավորման գործընթացի նպատակաուղղված ղեկավարումն է հատուկ կազմակերպված պայմաններում: Հիմնավորելու համար մեջբերենք Լ.Ս.Վիգոտսկու հետևյալ միտքը. «Դաստիարակության գործընթացի հիմքում պետք է ընկած լինի սանի անձնական գործունեությունը, և դաստիարակության ողջ արվեստը պետք է միայն հանգի նրան, որ կարգավորի, ղեկավարի և ուղղվածություն տա այդ գործունեությանը»:

Ի. Կանտը համոզված է, որ նորածինը մարդ է դառնում միայն դաստիարակության միջոցով. նա այն է, ինչ նրանից պատրաստում է դաստիարակությունը: Դաստիարակության մեջ է մարդկային բնության կատարելագործման մեծ գաղտնիքը:

Այսպիսով՝ դաստիարակությունն անձի կյանքի և ուսումնական գործունեության հատուկ կազմակերպված, նպատակաուղղված ու ծրագրված գործընթացն է, նրա մտագործունեության համար անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ հաղորդելու և վարքի՝ հասարակության համար ընդունելի նորմեր, բարոյաէթիկական որակներ ձևավորելու նպատակով:

Կազմակերպված, նպատակաուղղված դաստիարակությունը հասարակական գործունեություն է, որի իրականացման համար հասարակությունն օգտագործում է իր բոլոր միջոցները՝ արվեստը, գրականությունը, ԶԼՄ-ները, ուսումնական հաստատությունները, ընտանիքը և այլն: Կազմակերպված դաստիարակությունը մարդուն որոշակի քանակությամբ հասարակայնորեն անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով, հմտություններով զինելն է, նրան պատրաստելը կյանքին, աշխատանքին, մարդկանց հետ հաղորդակցմանը: Դաստիարակությունը պետք է ապահովի մարդու վարքի համապատասխանությունը հասարակության կողմից ընդունված վարքի նորմերին և կանոններին:

Դաստիարակությունն իրականացում են այդ գործին կոչված և հատուկ դրա համար նախապատրաստված մարդիկ՝ մանկավարժները, որոնք լիազորված են հասարակության կողմից սոցիալական այդ գործառույթը կատարելու համար: Դաստիարակության արդյունավետության համար մանկավարժը պետք է՝

- Ճանաչի երեխայի շրջապատը և դրանից բխող ներգործությունները,
- իմանա դպրոցականի ընտանեկան պայմանները, ընտանիքի անդամների փոխհարաբերությունները,

- երեխայի մեջ հայտնաբերի դրականը, ժառանգական նախադրյալները, հակումները և հենվելով դրանց վրա՝ իրականացնի դաստիարակությունը:

Այս ամենից հետո միայն մանկավարժը կարող է ծրագրել, պլանավորել և իրագործել դաստիարակության գործընթացը: Բնականաբար, դաստիարակությամբ հնարավոր չէ հիմնովին փոխել ժառանգված ֆիզիկական և հոգեմտավոր տվյալները, նյարդային գործունեության տեսակը: Սակայն գիտականորեն հիմնավորված և հատուկ կազմակերպված դաստիարակչական ներգործության պայմաններում հնարավոր է հասնել մեծ արդյունքի, եթե հաշվի առնվեն անձի նյարդային համակարգի գործունեության, հոգեբանական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, ապահովվի բոլոր օրգանիամակարգերի ճիշտ զարգացումը, որևէ գործունեության մեջ ընդգրկելու համար հաշվի առնվեն անձի տարիքային, անհատական-հոգեբանական առանձնահատկությունները, ժամանակին բացահայտվեն ընդունակությունները, հակումներն ու հետաքրքրությունները, բնածին օժտվածությունը:

Դաստիարակության գործընթացում էապես կարևորվում են գործունեությունը, ակտիվությունը և դրդապատճառները՝ այն ազդակները, որոնք անձին մղում են իրականացնելու իմացական-ճանաչողական գործունեությունը:

2. ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԸ

2.1. ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Մարդու զարգացումը չընդհատվող գործընթաց է, որի յուրաքանչյուր կենսափուլը սերտորեն կապված է նրա հիմնական գործունեության հետ, կազմակերպվում է սոցիալական որոշակի պայմաններում և բնութագրվում է նրա մեջ նոր որակների ձևավորմամբ և զարգացմամբ:

Յուրաքանչյուր տարիք ունի իրեն բնորոշ ֆիզիկական, կազմաբնախոսական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկությունները: Տարիքային մի փուլից մյուսին անցումը կարող է լինել կտրուկ, սահուն, դանդաղ, ցավագին և այլն: Տարիքային յուրաքանչյուր շրջան ընդգրկում է որոշակի հատկանիշներ և բնութագրվում է ըստ հետևյալ չափանիշների՝

- անձի սոցիալական վիճակի կամ տվյալ ժամանակաշրջանում այլոց հետ ունեցած հարաբերությունների,
- անձի գործունեության հիմնական տեսակի,
- անձնային առանձնահատկությունների:

Ելնելով կուտակված մանկավարժական փորձից՝ վաղնջական ժամանակներից մարդկությունը գիտակցել է այդ և աճող սերնդի կրթության, դաստիարակության հիմնախնդիրները լուծելիս անհրաժեշտ է համարել տարիքային փուլերի դասակարգումը: Տարիքային առանձնահատկությունները տվյալ շրջանին բնորոշ բնախոսական և հոգեբանական զարգացման յուրահատկություններն են, որոնք որոշվում են մի շարք պայմաններով՝ կյանքի տվյալ փուլում երեխային ներկայացվող պահանջների ամբողջությամբ, շրջապատի հետ փոխհարաբերություններով, գիտելիքների և գործունեության տեսակով, գիտելիքների յուրացման եղանակներով, ֆիզիկական զարգացման առանձնահատկություններով և այլն:

Մանկավարժության մեջ ընդունված է մարդկային կյանքի տարիքային հետևյալ շրջաբաժանումը.

- մանկություն՝մարդու ծննդից մինչև 10 -11 տարեկան
- դեռահասություն՝ 11-12-ից մինչև 15-16 տարեկան հասակը
- պատանեկություն՝ 16-17-ից մինչև 19-21 տարեկան
- երիտասարդություն կամ վաղ հասունություն՝21 տարեկանից մինչև 30
- հասունություն՝31-ից մինչև 45 տարեկան
- միջին տարիք՝ 45-65 տարեկան

- տարեց կամ նախածերունական[a] 65-74 տարեկան
- ծերունական[a] 75-90 տարեկան
- երկարակյացներ[a] 90 տարեկան և ավելի:

Դրանցից յուրաքանչյուրն իր հերթին բաժանվում է մի քանի շրջափուլերի: Այսպես, օրինակ, նախադպրոցական տարիքի ենթափուլերն են՝

- մանկություն կամ մինչ նախադպրոցական՝ 1-3 տարեկաններ,
- նախադպրոցական տարիք՝ 3-6 տ.
- կրտսեր նախադպրոցական տարիք՝ 3-4 տ.
- Միջին նախադպրոցական տարիք՝ 4-5 տ.
- Ավագ նախադպրոցական տարիք՝ 5-6 տ.

Դպրոցական տարիքը բաժանվում է հետևյալ երեք շրջափուլերի (նոր բաժանումը կատարվել է ըստ նոր կրթակարգի)՝

- կրտսեր դպրոցական տարիք	6-10տ. 1-4 դաս.
- միջին դպրոցական տարիք	10-15տ. 5-9 դաս.
- ավագ դպրոցական տարիք	15-18տ 10-12 դաս.

Մանկավարժության մեջ մշտապես ընդգրծվել է, որ տարիքային շրջաբաժանումը պայմանական բնույթ է կրում, քանի որ միշտ էլ ընդունված նորմաներից շեղումներ լինում են, որը պայմանավորված է նաև երեխաների ֆիզիկական և սեռական վաղ զարգացմամբ: Մանկավարժահոգեբանական գրականության մեջ այդ երևույթը ստացել է աքսելերացիա անվանումը (լատ. արագ զարգացում):

Աքսելերացիայի պատճառները դեռևս լիովին բացահայտված չեն, մինչդեռ հետևանքները՝ սեռական, քաղաքացիական և սոցիալական հասունության սահմանների միջև խզումը, բազում խնդիրներ է ստեղծում: Վաղ զարգացած դեռահասները՝ 12-14 տ. աղջիկները և 14-16տ. տղաները, իրենց բնախոսական զարգացմամբ համարյա հավասարվում են հասուն մարդու զարգացման մակարդակին, ինչը չենք կարող ասել նրա բարոյական, սոցիալական հասունության մասին: Սեռահասուն օրգանիզմը ձգտում է իրացնելու սեռական ձգտումները, սակայն առաջանում է հոգեբանական լարվածություն, որից ելքը կարող է բերել վաղ սեռական կապերի կամ վաղ ամուսնություն. արդյունքում բարոյական թերհասունությունը [ինֆանտիլ վիճակ] խանգարում է ճիշտ կողմնորոշվելուն: Երիտասարդ մարդը

սոցիալապես ինքնուրույն է դառնում 26-28 տարեկանում, երբ ձեռք է բերում մասնագիտություն: Այդ տարիքում նա կարող է ամուսնանալ, ընտանիք կազմել և դրա համար պատասխանատվություն ստանձնել:

2.2. ՏԱՐԲԵՐ ՏԱՐԻՔԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վաղ տարիք.

Երեխան խնամքի ու հոգածության կարիք ունի: Պետք է հետևել նրա ֆիզիկական զարգացմանը, սննդի, քնի և հանգստի ճիշտ կազմակերպմանը, ռեժիմին, այցելել մանկաբույժին: 7-8 ամսականում ծլում են ատամները, ակտիվանում են հոգեկան գործընթացները, խոսքի զարգացումը, ձևավորվում են խոսքի մեխանիզմները:

Նախադպրոցական տարիք.

Այս տարիքում [3-6/7տ.] շարունակվում է օրգանիզմի աճը, երեխաներն ընդգրկվում են խաղային գործունեության ոլորտը: Խաղը երեխայի հոգեկանում որակական փոփոխություններ է առաջացնում: Նրանում սաղմնավորվում են ուսումնական գործունեության հիմքերը, որն առաջատար է դառնում դպրոցական տարիներին: Խաղալիս երեխաները ձեռք են բերում համագործակցելու կարողություններ: Խաղը նպաստում է ուշադրության կենտրոնացմանը, ավելի լավ մտապահմանը: Խաղը լուրջ ազդեցություն է գործում խոսքի, մտքի զարգացման վրա:

Կրտսեր դպրոցական տարիք.

6-10 տարեկանը՝ 1-4 դասարանը, անցման այնպիսի շրջան է , որում երեխան իր մեջ միաժամանակ կրում է ինչպես նախադպրոցականի, այնպես էլ դպրոցականի գծեր: Այս հասակը երեխայի համար շրջադարձային փուլ է, քանի որ նրա կյանքում առաջատար գործունեություն է դառնում ուսումը: Դպրոցական տարիքում խաղը չի անհետանում, այն իր ներքին շարունակությունն է գտնում ուսուցման մեջ և աշխատանքում:

Կրտսեր դպրոցական տարիքը ճանաչողական գործունեության ակտիվացման փուլ է, նրանք ունեն վառ պատկերացումներ և երևակայություն,

որը պետք է խրախուսվի: Պետք է օգտագործել երեխաների բոլոր զգայարանները՝ հմտորեն զուգակցելով ուսումը, խաղը և աշխատանքը:

Միջին դպրոցական տարիք.

Դեռահասության փուլի սահմանները մոտավորապես համընկնում է հանրակրթական դպրոցի 5-9 դասարաններին և ընդգրկում են 11-12 տարեկանից մինչև 14-15 տարեկանը: Այս շրջանում է տեղի ունենում օրգանիզմի վեգետատիվ(աճեցողական) և էնդոկրին(ներզատիչ) համակարգերի վերափոխումը, տեղի է ունենում հասակի բուռն աճ, փոխվում է նյարդահոգեկան վիճակի կարգավորումը:

Ավագ դպրոցական տարիք.

Վաղ պատանեկությունը, որը 15-18 տարեկանն է, համապատասխանում է հանրակրթական դպրոցի 10-12-րդ դասարաններին, ուշ պատանեկան հասակը 19/20-21/22 տարեկանն է:

Վաղ պատանեկությունը աշխարհայացքի ձևավորման տեսակետից վճռորոշ շրջան է: Ակնհայտ է, որ աշխարհայացքային հիմքերը դրվում են ավելի վաղ տարիներին, սակայն բարոյական սկզբունքներն ամբողջական համակարգի վերածելու պահանջմունք առաջանում է ավագ դպրոցական տարիքում: Նման համակարգը անձին հնարավորություն կտա ոչ միայն հասկանալ շրջապատող աշխարհը, այլ գնահատել այն և որոշել նրա նկատմամբ իր վերաբերմունքը:

Եզրակացություն

Մարդը՝ որպես կենսաբանական էակ, իր զարգացման ընթացքում ենթարկվում է աննշան փոփոխությունների: Մարդու տեսակի փոփոխություն կարող է տեղի ունենալ միայն մարդու գենետիկական կոդի նկատմամբ ակտիվ միջամտության դեպքում: Գիտնականները այդպիսի հնարավորություն չեն բացառում. դա, ինչ խոսք, կունենա գիտական բացառիկ նշանակության, սակայն այն կանխորոշում է քաղաքական, սոցիալական լուրջ վտանգ՝ խախտելով մարդու բնական զարգացման ընթացքը և անկանխատեսելի հետևանքներ հարուցելով: Գենային փոփոխությունների ազդակ կարող են լինել ատոմային ճառագայթումը, ալկոհոլը, թմրանյութերը, ձայնային գերբեռնումը և այլն, որոնք կարող է խախտել ԴՆԹ-ի կառուցվածքը:

Ուսումնասիրությունները վկայում են, որ ժառանգվում են ոչ թե սոսկ ընդունակությունները, այլ դրանց նախադրյալները, իսկ ժառանգված հատկանիշների դրսևորումը և զարգացումը կախված է կյանքի պայմաններից, անհատի ձգտումներից, հասարակության պահանջմունքից և այլն:

Ժառանգականությունը, իր դերն ունենալով հանդերձ, չի կանխորոշում մարդու ճակատագիրը: Ժառանգաբար չեն փոխանցվում մարդուն բնութագրող այնպիսի հատկանիշներ, ինչպիսին են գիտելիքները, համոզմունքները, աշխարհայացքը, բնավորությունը, բարոյականային որակները:

Անձի զարգացման և ձևավորման մյուս կարևոր գործոնը սոցիալականն է, որը ներառում է՝

- կյանքի պայմանները (մեգա, մակրո, մեզո, միկրո միջավայր),
- մարդու գործունեությունը,
- դաստիարակությունը՝ որպես կազմակերպված երևույթ:

Միջավայր ասելով պիտի հասկանալ մարդուն շրջապատող իրականությունը, տնտեսական, քաղաքական պայմանները: Որոշակի դեր են խաղում նաև աշխարհագրական միջավայրը, ընտանիքը, մերձավորները և այլն:

Գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, -Եր. : Մանկավարժ, 2005, -454 էջ, /էջ 41-93/:

2. Թորգոմյան Լ.Վ.. Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, -Եր.: Տոներ, 2005, -135 էջ:

3. Педагогика: учебник для вузов по пед. специальностям: доп. М-вом образования и науки РФ / [Л. П. Крившенко и др.]под ред. Л. П. Крившенко. – Москва: Проспект, 2010. – 432 с. /էջ 15-27/

4. Педагогика: Учебное пособие для студ. пед. учеб. зав. /В. А. Сластенин, И. Ф. Исаев, А. И. Мищенко, Е. Н. Шиянов., -8-е изд. – М.:Академия. 2008. -566с /էջ112-129/.

5.http://uchebnikionline.com/pedagogika/pedagogika_zaychenko_ib/vikovi_individualni_osoblivosti_rozvitku.htm